Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

Կշիռների եւ չափերի միջազգային բյուրո (ԿՉՄԲ)

Բրետյուի տաղավար, Սեւր Սեդեքս F-92312

Ֆրանսիա

Տնօրեն՝

Դոկտոր Մարտին Միլթոն

Հարգելի՛ պարոն,

Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ Չափի եւ կշռի գլխավոր համաժողովի ընդհանուր կոմիտեի (ԿՉԳՀ) 21-րդ նիստի (1999թ.) «Չափի եւ կշռի գլխավոր համաժողովի ասոցացված անդամների մասին» 3-րդ բանաձեւին, ԿՉԳՀ-ի 23-րդ նիստի (2007թ.) «Գլխավոր համաժողովի ասոցացված անդամ պետությունների մասին» 5-րդ բանաձեւին եւ ԿՉԳՀ-ի 24-րդ նիստի (2011թ.) «Գլխավոր համաժողովի ասոցացված անդամ պետության կարգավիճակի մասին» 4-րդ բանաձեւին համապատասխան, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանն առընթեր «Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատու կլինի առնչվող բոլոր հարցերում Հայաստանի Հանրապետությանը ներկայացնելու համար:

«Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստան, Երեւան, 0051,

Կոմիտասի պող. 49/4 շենք,

info@armstandard.am,

+37411232600

Կոնտակտային տվյալներ

«Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար Ալբերտ Բաբայան (a.babayan@armstandard.am):

«Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատարն իրավասու կլինի ստորագրելու 1999 թվականի հոկտեմբերի 14-ով թվագրված «Կշիռների եւ չափերի միջազգային կոմիտեի (ԿՉՄԿ)՝ չափագիտական ազգային ինստիտուտների կողմից տրամադրված չափումների ազգային էտալոնների եւ տրամաչափարկման ու չափումների սերտիֆիկատների ճանաչման համաձայնությունը (ԿՉՄԿ ՓՃՀ)», եւ Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կունենա օգտվելու ՉԿԳՀ-ի ասոցացված անդամ պետություններին հասանելի ծառայություններից:

Ես երախտապարտ կլինեմ, եթե Դուք հաշիվ-վավերագիր ներկայացնեք՝ ԿՉՄԲ-ի առաջին տարեկան բաժանորդագրության վճարումն իրականացնելու համար: Ավելին, ես հասկանում եմ, որ հաջորդ տարիների համար բաժանորդագրությունը ենթակա կլինի ԿՉԳՀ-ի վերոնշյալ 24-րդ նիստի (2011թ.) 4-րդ բանաձեւի դրույթներին, ի լրումն ԿՉՄԲ-ի կողմից տրամադրվող դոտացիայի վերաբերյալ ԿՉԳՀ-ի հետագա որոշումների:

Խնդրում ենք հաստատել սույն դիմում-գրության ընդունումը, որպեսզի հնարավոր լինի ավարտին հասցնել դրա մեկնարկի համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը:

Հարգանքով՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

**ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**9 Rue Viète,**
**75017 PARIS**

Կշիռների և չափերի միջազգային բյուրոն (BIPM) իր հարգանքն է հավաստում Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը և հաստատում է 2025 թ. մարտի 14-ի թիվ ARM-N1 1039 հայտագրի, որը ԿՉՄԲ-ն ստացել է 2025 թ. մարտի 17-ին, և կից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2025 թվականի մարտի 12-ի թիվ 09.11.515193-2025 նամակի ստացումը:

Սույնով ԿՉՄԲ-ն ընդունում է Հայաստանի Հանրապետության՝ 2025 թվականին ասոցացված պետություն դառնալու հայտը: 2025 թվականի համար նախատեսված 13 359 (հաշիվ-ապրանքագիրը կցվում է) եվրոյի չափով առաջին տարեկան անդամավճարը ԿՉՄԲ կողմից ստանալուց հետո՝ ասոցացված պետություն դառնալու գործընթացը կավարտվի և Հայաստանի Հանրապետությունը կդառնա ասոցացված պետություն:

Միջազգային կշիռների և չափերի բյուրոն , օգտվելով առիթից, կրկին իր խորին հարգանքն է հավաստում Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը:

18 մարտի, 2025թ.

**Առդիր՝**

2025 թվականի մարտի 17-ին կազմված հաշիվ ապրանքագիրը՝ Հայաստանի Հանրապետության՝ 2025 թ. ասոցացված պտության կարգավիճակով առաջին անդամավճարը: